ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Զաքարյան, Արիստոտելը և XIV դարի հայ փիլիսոփայությունը, «Լիմուշ» հրատարակչություն, Երևան, 2017, 236 էջ

Հայագիտական հետազոտությունների շարքն ավելացել է մի ուշագրավ և յուրահատուկ ուսումնասիրությամբ, որը եկել է լրացնելու հայ-հունական փիլիսոփայական առնչություններին նվիրված հետազոտությունների բացը՝ ներկայացնելով համաշխարհային փիլիսոփայության պատմության մեջ բացառիկ ազդեցություն ունեցող իմաստասերներից մեկի՝ Արիստոտելի հայացքների յուրացման ու ժառանգորդման պատմությունը միջնադարյան և հատկապես XIV դարի հայ մտահոգևոր իրականության մեջ: Պրոֆ. Ս. Զաքարյանի գրախոսվող աշխատությունը նվիրված է հանրագիտակ մտածող, հունական փիլիսոփայության «Զևս» պատվանունը ստացած Արիստոտելի գաղափարների զարգացմանը հայկական դպրոցային ավանդույթում: Այն ըստ էության բաղկացած է նույնաբնույթ ակնարկներից, որոնց մեծ մասը ստեղծվել է Արիստոտելի ծննդյան 2400-ամյակի հոբելյանական տարում՝ 2016 թ., երբ ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում անցկացվեց գիտաժողով՝ «*Արիստոտելի ժառանգությունը հայոց մշակույթի համատեքստում: Արիստոտելյան ընթերցումներ*» խորագրով: Ս. Զաքարյանը նշում է, որ Երևանի պետական համալսարանի, Մաշտոցի անվան Մատենադարանի և Արցախի պետական համալսարանի համատեղ ջանքերով կազմակերպված այդ գիտաժողովը «ևս մեկ անգամ ցույց տվեց, որ հայ փիլիսոփայության վրա արիստոտելյան փիլիսոփայության ազդեցության հարցի բազմակողմանի քննարկումն ու լուսաբանումը շարունակում է մնալ հայ փիլիսոփայապատմական գիտության առաջնահերթ խնդիրներից մեկը» (էջ 4-5): Ըստ այդմ՝ պրոֆ. Ս. Զաքարյանը սույն ժողովածուում, ինչպես նաև այլ աշխատություններում[1] վերարծարծում է նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ հայոց փիլիսոփայության պատմության վերաիմաստավորման խնդիրը: Բանն այն է, որ հայ փիլիսոփայության պատմությունը՝ որպես հայագիտության ամենաերիտասարդ բնագավառներից մեկը, բուռն զարգացում է ապրել նախորդ դարի երկրորդ կեսից սկսած, երբ հայաստանյան մտահոգևոր իրականության դաշտում տիրապետողը մարքսիզմի լենինյան տարատեսակն էր իր ապաստվածությամբ, նյութապաշտությամբ և դրական

[1] Տե՛ս **Ս. Ա. Զաքարյան,** Մարդու հիմնահարցը 13-15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ, Եր., 1999, **նույնի՝** Հայկական վերածննդի հարցը (մեթոդաբանական վերլուծություն), Եր., 2006, **նույնի՝** Ունիվերսալիաների հիմնահարցը միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ, Եր., 2014:

գիտապաշտությամբ։ Բնականաբար, այդ մեթոդաբանական հիմքերն իրենց ազդեցությունն են թողել հայ փիլիսոփայության պատմության այն բոլոր վերակազմությունների վրա, որոնք իրականացվել են խորհրդային տարիներին։ Փիլիսոփայության մարքսիստ պատմաբանները հայ իմաստասերների գրաբարյան տեքստերն «ընթերցել» են իրենց մտահարացույցի շրջանակներում, «թարգմանել» ու մեկնաբանել այնպես, որ դրանց աստվածասեր, բնազանցական ու խորհրդապաշտական ոգին հնարավորինս փոխարինվի «առաջադեմ» նյութապաշտությամբ, նոմինալիզմով և գիտականակերպությամբ[2]։ Մինչդեռ Ս. Զաքարյանը *«Արդյո՞ք սքոլաստիկական էր XIV դարի հայ փիլիսոփայությունը («Քրիստոնեացված» արիստոտելականությունը միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ)»* ակնարկում ցույց է տալիս, որ խորդահայ փիլիսոփայապատմական ավանդույթը, սքոլաստիկան համարելով «հետադեմ», փորձում էր հայ մտածողներին «ձերբազատել» այդ բնորոշումից, թեպետ «տաթևցիների փիլիսոփայությունը միանշանակ սքոլաստիկական էր, որովհետև ա) այդ փիլիսոփայությունը ստեղծվել էր եկեղեցուն կից դպրոցում՝ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների կողմից հիմնադրված ու վերահսկվող-կառավարվող Տաթևի համալսարանում, բ) այդ փիլիսոփայությունը օգտագործվում էր հիմնավորելու քրիստոնեական կրոնի և հայոց եկեղեցու վարդապետության սկզբունքները, գ) միջնադարյան հայ մտածողների փիլիսոփայման կերպը, մեկնաբանման ու շարադրման մեթոդը սքոլաստիկական էր, այսինքն՝ հեղինակազոր, դոգմատիկ, գրքային» (էջ 40)։ Հաջորդ, «*Ընդհանրականների (ունիվերսալիաների) մասին արիստոտելյան ուսմունքի մեկնաբանությունը Տաթևի դպրոցում*» ակնարկում ևս Ս. Զաքարյանը շարունակում է խորհրդային փիլիսոփայապատմական ավանդույթի քննադատությունը՝ իրավամբ նշելով, որ քննարկվող դարաշրջանի հայ մտածողները դիտարկվում էին որպես նոմինալիստ կամ կոնցեպտուալիստ, քանի որ նրանք հետևում էին Արիստոտելին, որին նույն ավանդույթը համարում էր մատերիալիստական միտում ունեցող նոմինալիստ կամ կոնցեպտուալիստ։ Սակայն, ըստ Ս. Զաքարյանի, վերջինս ո՛չ նոմինալիստ է, ո՛չ կոցեպտուալիստ, այլ ռեալիստ է, քանի որ ընդունում է ընդհանուրի ռեալ գոյությունը (տե՛ս էջ 59-60)։ Իսկ Տաթևի դպրոցի մտածողները հետևում են Արիստոտելի (նաև՝ Դավիթ Անհաղ-

[2] Այսպես, նորպլատոնական իմաստասեր Մովսես Խորենացու «*Հայոց պատմության*» աշխարհաբար տեքստն այնպես է թարգմանվել գրաբարից, որ դրանում առկա իմաստասիրական ոգին իր տեղը զիջել է անդեմ գիտականությանը՝ Խորենացու երկն աշխարհաբարով ընթերցողի համար անհասկանալի դարձնելով նրա իմաստասեր և առավել ևս նորպլատոնական լինելու հանգամանքը (այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Ս. Ս. Պետրոսյան**, Իմաստասիրությունը որպես հայոց մշակութային ինքնության գոյացնող բաղկացուցիչ // **Ս. Ա. Զաքարյան, Հ. Ղ. Միրզոյան, Ս. Ս. Պետրոսյան և այլք**, Հայ փիլիսոփայությունն ազգային ինքնության հարացույցների կառուցարկման ու արդիականացման համատեքստում, «Հայոց ինքնության հարցեր», Պրակ 4, Եր., 2017, էջ 103-106)։

թի) տեսակետին՝ ընդունելով ընդհանրականների եռակի գոյության բանաձևը, ըստ որի՝ ընդհանուրը որպես նախագաղափար գոյություն ունի Աստծո բանականության մեջ, որպես հատկություն՝ իրերի մեջ և որպես մտածական էություն, հասկացություն՝ մտքի մեջ։ Հետևաբար, նրանք պաշտպանում են ընդհանրականների հիմնահարցի լուծման չափավոր ռեալիստական տեսակետ, որը Ս. Զաքարյանն առաջարկում է անվանել հատկութենական ռեալիզմ (տե՛ս էջ 80)։ Այս վերաիմաստավորումը կարևոր է պատմական իրողություններն իրենց անուններով կոչելու և եկեղեցական, հոգևոր գործիչներին արհեստականորեն իրենց մշակութային աշխարհից չկտրելու տեսանկյունից։ Օրինակ՝ Հ. Գաբրիելյանի «*Հայ փիլիսոփայական մտքի պատմություն*» քառահատորում «Գլաձորի և Տաթևի համալսարանները» բաժինը ներկայացված է որպես «*Նոմինալիզմի զարգացման ընթացքը*» գլխի ենթագլուխ, ինչը ընթերցողին «հուշում է», որ այդ համալսարանները եղել են նոմինալիզմի զարգացման կենտրոններ[3]։ Իսկ «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» ժողովածուում Ս. Արևշատյանի «Գրիգոր Տաթևացի» ակնարկը սկսվում է. «Անվանի *փիլիսոփա-նոմինալիստ*, մանկավարժ և եկեղեցական գործիչ Գրիգոր Տաթևացու ստեղծագործությունը ֆեոդալական Հայաստանի փիլիսոփայության և սոցիալ-քաղաքական մտքի զարգացման բարձրակետն է»[4] դատողությամբ (ընդգծումն իմն է – Ս. Պ.)։ Բնականաբար, սովորող երիտասարդությունը յուրացնում է նման վերագրումները, ու հայոց փիլիսոփայապատմական իրողությունների հանդեպ ակամա ձևավորում թյուր վերաբերմունք։ Խնդիր չունենալով նսեմացնելու նշված և այլ հետազոտողների ներդրումը հայոց փիլիսոփայության պատմության հիմնախնդիրների հետազոտման գործում՝ հարկ է, սակայն, գիտակցել, որ նրանք ժամանակաշրջանի անողոք պահանջների բերումով այլ կերպ վարվել չէին կարող, և այժմ անհրաժեշտ է վերաարժևորել հայոց փիլիսոփայության պատմությունը թե՛ հիմնախնդիրների ուսումնասիրման և թե՛ առանձին մտածողների ներդրումների գնահատման տեսանկյունից։

Վերագնահատելով հայոց միջնադարյան մտածողության բնույթը և միանգամայն իրավացիորեն նշելով, որ ինչպես Արիստոտելի, այնպես էլ Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու բնազանցական-գոյաբանական ուսմունքի կառուցարկման ելակետն ու վերջնակետն Աստված է (տե՛ս էջ 83), հաջորդ ակնարկներում Ս. Զաքարյանը դիտարկում է Աստծո կեցության ապացույցների և հոգու մասին ուսմունքի տարրերը քննարկվող գաղափարական ժառանգորդման համատեքստում։ Այնուհետև հետազոտելով արիստոտելյան գաղափարների առկայությու-

---

[3] Տե՛ս **Հ. Գ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Եր., 1958, էջ 154-162։

[4] **Ս. Ս. Արևշատյան**, Գրիգոր Տաթևացի // Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V- XVIII դարեր, Եր., 1976, էջ 392։

նը Որոտնեցու և Տաթևացու ուսմունքներում՝ նա ցույց է տալիս, որ տվյալ դարաշրջանի հայ հեղինակները շարունակել են զարգացնել դեռևս վաղ միջնադարում հայ փիլիսոփայության մեջ ձևավորված արիստոտելյան ավանդույթը։ Հետևելով միջնադարյան դպրոցային (սքոլաստիկական) փիլիսոփայման եղանակին՝ նրանք փորձել են Արիստոտելի փիլիսոփայության դրույթների օգնությամբ հիմնավորել թե՛ կրոնաաստվածաբանական ու եկեղեցական վարդապետության սկզբունքները և թե՛ հասարակական կյանքին վերաբերող մարդաբանական, սոցիալ-քաղաքական և այլ գաղափարները։

Ս. Զաքարյանի քննարկվող գրքի ամենակարևոր արժանիքներից է այն, որ դրանում հեղինակը ոչ միայն անդրադառնում է մեկ հարյուրամյակի՝ IV դարի հայ մտահոգևոր իրականությունում Արիստոտելի ներկայության խնդրին, այլև հույն մեծ մտածողի ազդեցությունը դիտարկելով ողջ միջնադարյան հայոց իմաստասիրության ծիրում՝ առաջարկում է շրջանառության մեջ դնել «**հայկական արիստոտելականություն**» հասկացությունը, քանի որ «*անտիկ և միջնադարյան մյուս մտածողների համեմատությամբ այնքան զգալի է Արիստոտելի ներկայությունը միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ*» (էջ 83)։ Փորձելով հայ իմաստասիրությունը դիտարկել համաշխարհային (եվրոպական, ռուսական, արևելյան) ձեռքբերումների համատեքստում՝ Ս. Զաքարյանը նաև նախանշում է այդ ուղղությամբ հետագա ուսումնասիրությունների ուղեծիրը։ Նա գրում է. «*Հայկական արիստոտելիզմը, անկախ ամեն բանից, ինքնին քաղաքակրթական-մշակութաբանական ու փիլիսոփայական արժեք է և ներկայացնում է գիտական հետաքրքրություն*» թե՛ որպես համաշխարհային արիստոտելիզմի մի մաս, թե՛ որպես հայ միջնադարյան փիլիսոփայությունը հասկանալու բանալի և թե՛ որպես աղբյուրագիտական արժեք (տե՛ս էջ 11)։

Վերջում հավելենք, որ Ս. Զաքարյանի աշխատությունը կարևոր հանգրվան է հայկական արիստոտելականության պատմության ուսումնասիրության ճանապարհին, որը շուտով կլրացվի նաև ԵՊՀ-ում անցկացված Արիստոտելի ծննդյան 2400-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուով՝ նոր լիցքեր հաղորդելով հայկական արիստոտելականության պատմության հաջորդ հետազոտողներին։

ՍԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ